



USAID
ԱՄԵՐԻԿԱՅԻ ԺՈՂՈՎՐԴԻՑ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՍՎԱԿԱՐԳԵՐԻ ՀՁՈՐԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

**ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՀԱՍՎԱԿԱՐԳԻ ԲԱՐԵՓՈՒՆՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ
ԻՐԱԶԵԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ**

**ՀԱՍՎԱԶԳԱՅԻՆ ՀԻՄՆԱՅԻՆ ՀԱՐՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
ԶԵԿՈՒՅՑ**

Կազմվեց՝

ԱՄՆ ՄԶԳ Հայաստան,
Սոցիալական պաշտպանության համակարգերի
իզորացման (ՍՊՀՀ) ծրագրի պատվերով

Կազմողներ՝

Անի Դալլաքյան և Նարինե Հակոբյան
Ավագ գիտաշխատողներ
Թուրքմենստանի հասարակական հետազոտությունների կենտրոն
Հայաստանի ամերիկյան համալսարան

Լուսիկ Դանիելյան
Քաղաքականության վերլուծության Թուրքմենստանի կենտրոնի տնօրեն
Հայաստանի ամերիկյան համալսարան

Հունվար, 2009
Երևան, Հայաստան

Սույն հաշվետվությունը պատրաստվել է ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ) ՍՊՀՀ ծրագրի վերանայման համար: Այն կազմվել է ՀԱՀ Քաղաքականության վերլուծության Թուրքմենստանի կենտրոնի կողմից: Հեղինակի կողմից արտահայտված տեսակետները հնարավոր է, որ չհամընկնեն ԱՄՆ ՄԶԳ կամ ԱՄՆ կառավարության տեսակետների հետ:

Բովանդակություն

Ամփոփում.....	4
Ներածություն.....	5
Սեթորդաբանություն	5
Հիմնական արդյունքները.....	6
<i>Գործող կենսաթոշակային համակարգի ընթացումը.....</i>	<i>6</i>
<i>Կենսաթոշակային համակարգի փոփոխությունների մասին իրազեկությունը.....</i>	<i>8</i>
<i>Կենսաթոշակային համակարգում նախատեսվող բարեփոխումների մասին գիտելիքի մակարդակը.....</i>	<i>9</i>
Գծապատկեր Ա. Կենսաթոշակային համակարգի բարեփոխումների մասին արտահայտություններից տրված ճիշտ պատասխանների տոկոսները.....	10
<i>Ֆորմալ և ոչ ֆորմալ զբաղվածությունը Հայաստանում.....</i>	<i>12</i>
Հիմնական արդյունքների ամփոփում.....	13
<i>Գործող կենսաթոշակային համակարգի ընթացումը.....</i>	<i>13</i>
<i>Կենսաթոշակային համակարգի փոփոխությունների մասին իրազեկությունը.....</i>	<i>13</i>
<i>Կենսաթոշակային համակարգում նախատեսվող բարեփոխումների մասին գիտելիքի մակարդակը.....</i>	<i>13</i>
Աղյուսակ 1. Հարցազրույցների քանակն ըստ մարզերի.....	15
Աղյուսակ 2. Հարցազրույցների քանակն ըստ քաղաքային և գյուղական բնակավայրերի.....	15
Աղյուսակ 3. Հարցազրույցների քանակն ըստ երևանի և տասը մարզերի.....	15
Աղյուսակ 4. Լսել է Հայաստանում կենսաթոշակային համակարգում և ընթացակարգերում նախատեսվող փոփոխությունների մասին.....	15
Աղյուսակ 5. Հայաստանում կենսաթոշակային համակարգի փոփոխությունների մասին տեղեկացվածությունը.....	16
Աղյուսակ 5ա. Աղյուսակ 5-ի «այլ» պատասխանները.....	16
Աղյուսակ 6. Հայաստանում կենսաթոշակային համակարգի փոփոխությունների մասին տեղեկատվության աղբյուրը.....	17
Աղյուսակ 6ա. Աղյուսակ 6-ի «այլ» պատասխանները.....	17
Աղյուսակ 7. Ճիշտ գիտի, թե որ թվականին տեղի կունենան կենսաթոշակային համակարգի փոփոխությունները Հայաստանում.....	17
Աղյուսակ 8. Ճիշտ գիտի, թե երբ են կենսաթոշակները վերջին անգամ բարձրացվել Հայաստանում.....	18
Աղյուսակ 9ա. Ես հասկանում եմ Հայաստանում գործող կենսաթոշակային համակարգը.....	18
Աղյուսակ 9բ. Ես լավատեղյակ եմ այն փոփոխությունների մասին, որոնք իրականացվում են կենսաթոշակային համակարգում.....	18
Աղյուսակ 9գ. Եթե ես 63 տարեկան լինեի այսօր, ես ունեմ բավարար տեղեկատվություն՝ կենսաթոշակի դիմելու համար.....	19
Աղյուսակ 10. Կարծիքների միջին արժեքները՝ ներկայացված աղյուսակներ 9ա-9գ-ում.....	19
Աղյուսակ 11. Ճիշտ գիտի, թե որտեղ դիմել կենսաթոշակի համար Հայաստանում, եթե կենսաթոշակի անցնելիս լինեի այսօր.....	19
Աղյուսակ 12. Ճիշտ գիտի, թե ինչ փաստաթղթեր պետք է մարդիկ ներկայացնեն կենսաթոշակի նշանակման համար Հայաստանում.....	20
Աղյուսակ 13. Ճիշտ գիտի, թե մարդիկ ինչ քայլեր պետք է ձեռնարկեն՝ Հայաստանում իրենց կենսաթոշակներն ստանալու համար.....	20
Աղյուսակ 14ա. Նոր կենսաթոշակային համակարգը կսկսի գործել 2015թ.-ին.....	21
Աղյուսակ 14գ. Առաջին մի քանի տարիների համար նոր կենսաթոշակային համակարգը տարբեր կլինի նրանց համար, ովքեր 40 տարեկանից բարձր են, և նրանց համար, ովքեր 40 տարեկանից ցածր են.....	21
Աղյուսակ 14դ. Առաջին մի քանի տարիների համար նոր կենսաթոշակային համակարգը տարբեր կլինի նրանց համար, ովքեր 30 տարեկանից բարձր են, և նրանց համար, ովքեր 30 տարեկանից ցածր են.....	21

Աղյուսակ 14ե. Նոր կենսաթոշակային համակարգում այն անձինք, ովքեր երբեք չեն աշխատել, չեն ստանա կենսաթոշակ.....	22
Աղյուսակ 14գ. Նոր կենսաթոշակային համակարգում 40 տարեկանից ցածր անձինք պետք է գումար փոխանցեն նոր կուտակային համակարգ, և այդ գումարը կներդրվի կենսաթոշակների համար.....	22
Աղյուսակ 14է. Նոր կենսաթոշակային համակարգում այն գումարը, որ Դուք կստանաք կենսաթոշակային կուտակային հաշվից, կախված է այն գումարից, որ Դուք ունեք այդ հաշվի վրա, և նրանից, թե ինչպես է այն ներդրվել.....	22
Աղյուսակ 14ը. Նոր կենսաթոշակային համակարգում աշխատողները պետք է առնվազն 5 տարի աշխատեն աշխատանքային պայմանագրերով.....	22
Աղյուսակ 14թ. Նոր կենսաթոշակային համակարգում, եթե Դուք աշխատող եք, Դուք պետք է ունենաք աշխատանքային պայմանագիր՝ կենսաթոշակային կուտակային հաշվին ներդրումներ կատարելու համար.....	23
Աղյուսակ 14ժ. Նոր կենսաթոշակային համակարգում մասնավոր ակտիվների կառավարիչները կներդնեն Ձեր խնայողությունները Ձեզ համար.....	23
Աղյուսակ 14ի. Այդ նոր փոփոխությունները չեն ազդելու այն անձանց վրա, ովքեր արդեն անցել են կենսաթոշակի և ստանում են կենսաթոշակ.....	23
Աղյուսակ 15. Ծիշտ գիտի, թե ինչ է անում ակտիվների կառավարիչը.....	23
Աղյուսակ 16. Ներկայումս փնտրում է աշխատանք.....	24
Աղյուսակ 17. Ունի կես դրույքով կամ լրիվ դրույքով աշխատանք, ներառյալ ինքնազբաղվածությունը.....	24
Աղյուսակ 18. Վարձու աշխատող, ինքնազբաղված է, թե՞ գործատու է.....	24
Աղյուսակ 19. Ունի աշխատանքային պայմանագիր, եթե վարձու աշխատում է.....	24
Աղյուսակ 20. Գործատուն վճարումներ է կատարում սոցիալական կենսաթոշակային հիմնադրամ, եթե վարձու աշխատող է.....	25
Աղյուսակ 21. Աշխատանքային պայմանագիր չունենալու պատճառները, եթե աշխատում է ուրիշի մոտ.....	25
Աղյուսակ 21ա: Աղյուսակ 21-ի “այլ” պատասխանները.....	26
Աղյուսակ 22. Գրանցված է, որպես անհար ձեռներեց, եթե ինքնազբաղված է.....	26
Աղյուսակ 23. Եթե գործատու է, ունի աշխատանքային պայմանագրեր իր աշխատողների հետ.....	26
Ժողովրդագրական տվյալներ.....	27
Աղյուսակ 24. Հարցվածների տարիքը.....	27
Աղյուսակ 25. Հարցվածների սեռը.....	27
Աղյուսակ 26. Հարցվածների ստացած ամենաբարձր կրթությունը.....	27

Ամփոփում

ԱՄՆ ՄԶԳ կողմից ֆինանսավորվող «Աեկոմ միջազգային զարգացում» (նախկինում Սըրվիսիզ գրուպ ինք.) ընկերությունը Հայաստանի Հանրապետությանը տրամադրում է տեխնիկական աջակցություն Սոցիալական պաշտպանության համակարգերի հզորացման ծրագրի միջոցով, որը հնգամյա ծրագիր է՝ ուղղված Հայաստանում սոցիալական պաշտպանության համակարգերի կատարելագործմանը և, միևնույն ժամանակ, բնակչության ինքնավստահության մեծացման ու հիմնական կարիքների բավարարման հարցում պետությունից կախվածության նվազեցման հնարավորությունների ընձեռմանը: Պայմանագիր է կնքվել Հայաստանի ամերիկյան համալսարանի «Թուրփանջյան հասարակական հետազոտությունների կենտրոնի» հետ, որպեսզի վերջինս իրականացնի Հայաստանի բնակչության շրջանում հիմնային հարցում՝ Հայաստանում գործող կենսաթոշակային համակարգի և առաջիկա կենսաթոշակային բարեփոխումների մասին իրազեկությունը չափելու համար:

Հարցվածների գրեթե կեսը կարծում է, որ հասկանում է Հայաստանում գործող կենսաթոշակային համակարգը և որ այսօր ունի բավարար տեղեկատվություն՝ կենսաթոշակի դիմելու համար, և իրոք, երկու հարցվածներից մեկը ճիշտ գիտի, թե որտեղ դիմել կենսաթոշակների համար: Այնուհանդերձ, հարցվածների միայն 55 տոկոսն է կարողացել նշել կենսաթոշակների նշանակման համար պահանջվող վեց փաստաթղթերից մեկը կամ երկուսը, և հարցվածների միայն երեք տոկոսը գիտի, թե ինչ քայլեր պետք է մարդիկ ձեռնարկեն կենսաթոշակ ստանալու համար:

Հինգ հարցվածներից երկուսը լսել են Հայաստանում կենսաթոշակային համակարգում և ընթացակարգերում նախատեսվող փոփոխությունների մասին, սակայն երբ լրացուցիչ հարց է տրվել այդ փոփոխությունների մանրամասների մասին, այդ հարցվածների մեծամասնությունը կարողացել է նշել միայն կենսաթոշակների չափերի առաջիկա բարձրացումը: Հարցվածների միայն 6 տոկոսը գիտի, որ փոփոխությունները տեղի կունենան 2010թ.-ին:

Տասը հարցվածներից ութը սխալվում էին, երբ կարծում էին, որ նոր կենսաթոշակային համակարգում աշխատողները պետք է առնվազն հինգ տարի աշխատեն աշխատանքային պայմանագրերով, որպեսզի ստանան ամբողջական կենսաթոշակ: Հարցվածների 40 տոկոսը գիտի, որ առաջին մի քանի տարիների համար կենսաթոշակային համակարգը տարբեր կլինի նրանց համար, ովքեր 40 տարեկանից բարձր են, և նրանց համար, ովքեր 40 տարեկանից ցածր են: Հարցվածների գրեթե կեսը գիտի, որ նոր կենսաթոշակային համակարգում 40 տարեկանից ցածր անձինք պետք է նոր կուտակային համակարգ փոխանցեն գումար, որը կներդրվի կենսաթոշակների համար, որ այդ նոր փոփոխությունները չեն ազդելու այն անձանց վրա, ովքեր արդեն անցել են կենսաթոշակի և ստանում են կենսաթոշակ, և որ կենսաթոշակային կուտակային հաշվից ստացած գումարը կախված կլինի այն գումարից, որ առկա է այդ հաշվի վրա, և նրանից, թե ինչպես է այն ներդրվել: Հարցվածների միայն մոտ 3 տոկոսը գիտի, թե ինչ է անում ակտիվների կառավարիչը:

Վարձու աշխատողներից տասը հարցվածներից մոտ ինն ունեն աշխատանքային պայմանագիր: Ամենահաճախ նշված պատճառը, թե ինչու մնացած հարցվածները չունեն պայմանագիր, այն է, որ նրանք չեն համարում այն կարևոր և անհրաժեշտ: Տասը ինքնազբաղված հարցվածներից միայն մեկն էր գրանցված, որպես անհատ ձեռներեց, մինչդեռ գործատուների գրեթե չորս հինգերորդը հայտնել է, որ իրենք ունեն աշխատանքային պայմանագրեր իրենց աշխատողների հետ:

Ներածություն

ԱՄՆ ՄԶԳ կողմից ֆինանսավորվող «Աեկոմ միջազգային զարգացում» (նախկինում Սըրվիսիզ գրուփ ինք.) ընկերությունը Հայաստանի Հանրապետությանը (ՀՀ) տրամադրում է տեխնիկական աջակցություն Սոցիալական պաշտպանության համակարգերի հզորացման (ՍՊՀՀ) ծրագրի միջոցով: ԱՄՆ ՄԶԳ ՍՊՀՀ ծրագիրը հնգամյա ծրագիր է՝ ուղղված Հայաստանում սոցիալական պաշտպանության համակարգերի կատարելագործմանը և, միևնույն ժամանակ, բնակչության ինքնավստահության մեծացման ու հիմնական կարիքների բավարարման հարցում պետությունից կախվածության նվազեցման հնարավորությունների ընձեռմանը: ՍՊՀՀ-ն նպատակաուղղված է սոցիալական պաշտպանության չորս գլխավոր ոլորտներին՝ սոցիալական ապահովագրություն, զբաղվածության ծառայություններ, մասնագիտական անվտանգություն ու Աշխատանքային օրենսգիրք և սոցիալական աջակցության ծրագրեր բնակչության խոցելի խմբերի համար: «Աեկոմ միջազգային զարգացում» ընկերությունը դիմել է Հայաստանի ամերիկյան համալսարանի (ՀԱՀ) «Թուրփանջյան հասարակական հետազոտությունների կենտրոնին» (ԹՀՀԿ)՝ մասնակցելու ՍՊՀՀ հետազոտական աշխատանքներին:

Այս զեկույցով ներկայացվում են ՍՊՀՀ ծրագրի հետ համագործակցության շրջանակում ԹՀՀԿ/ՀԱՀ-ի իրականացրած աշխատանքի արդյունքները, այն է՝ իրականացնել Հայաստանի բնակչության շրջանում հիմնային հարցում՝ Հայաստանում գործող կենսաթոշակային համակարգի և առաջիկա կենսաթոշակային բարեփոխումների մասին իրազեկությունը գնահատելու նպատակով: Այդ հարցումն իրականացվել է մոնիթորինգային նպատակներից ելնելով:

Հայաստանի ամբողջ տարածքում իրականացված այս հետազոտության նպատակն է պարզել հասարակության՝ գործող կենսաթոշակային համակարգի ընթացումը, կենսաթոշակային համակարգի փոփոխությունների մասին հանրային իրազեկությունը, կենսաթոշակային համակարգում նախատեսվող բարեփոխումների մասին գիտելիքի մակարդակը, ինչպես նաև ֆորմալ և ոչ ֆորմալ զբաղվածությունը Հայաստանում:

Մեթոդաբանություն

Հայաստանի 18-ից մինչև 62¹ տարեկան քաղաքացիների ներկայացուցչական ընտրանքը որոշելու համար ԹՀՀԿ-ն դիմել է ՀՀ Ազգային վիճակագրական ծառայությանը՝ հետևյալ պարամետրերի վերաբերյալ գոյություն ունեցող տեղեկատվությունն ստանալու համար. 1) բնակչության թվաքանակը՝ մարզային կտրվածքով, 2) տասը մարզերից յուրաքանչյուրի բնակչության թվաքանակը՝ գյուղական և քաղաքային բնակիչների կտրվածքով և 3) Երևանի բնակչության թվաքանակը՝ ըստ տասներկու համայնքների: Տնային տնտեսություններն ընտրվել են Երևան քաղաքից և տասը մարզերից համամասնորեն՝ արտացոլելով ՀՀ վերջին մարդահամարի տվյալները: Յուրաքանչյուր մարզից պատահականորեն ընտրվել են մեկ քաղաք և մեկ գյուղ: ԹՀՀԿ-ն տասը քաղաքներից յուրաքանչյուրի համար ՀՀ Չեղդեգիայի և քարտեզագրության կենտրոնից ձեռք են բերել մանրամասն քարտեզներ²: Երևանի դեպքում օգտագործվել է քաղաքի քարտեզը, որում պատկերված են շենքերն ըստ համայնքների: ԹՀՀԿ-ն դիմել է տասը մարզային քաղաքներին և Երևանի տասներկու համայնքներին՝ որոշելու համար

¹ Հարցման ամենատարեց մասնակիցները 62 տարեկան էին, քանի որ այս հետազոտությունը նպատակ ուներ ընտրանքի մեջ ընգրկելու միայն այն անձանց, ովքեր դեռ կենսաթոշակառու չեն:

² Դրանք ի սկզբանե պատրաստվել են ԳՅ 2001-ի մարդահամարի համար:

բազմաբնակարան շենքերի և սեփական առանձնատների համամասնությունը: Մարզային յուրաքանչյուր քաղաքի և Երևանի յուրաքանչյուր համայնքի համար օգտագործվել են քարտեզներ՝ պարբերական (սիստեմատիկ) պատահական ընտրանքի միջոցով շենքերն ընտրելու համար: Տասը քաղաքներում և Երևանում՝ արդեն տեղում, յուրաքանչյուր բազմաբնակարան շենքից պարզ պատահական ընտրանքի միջոցով ընտրվել է մեկ տնային տնտեսություն: ԹՀՀԿ-ն դիմել է տասը գյուղերի գյուղապետարաններին՝ տնային տնտեսությունների թիվը որոշելու համար, և տնային տնտեսությունները տեղում ընտրվել են պարբերական (սիստեմատիկ) պատահական ընտրանքի միջոցով: Տնային տնտեսությունների ներսում հարցվածներն ընտրվել են պատահականորեն: Աղյուսակներ 1, 2 և 3-ը ցույց են տալիս անցկացված հարցազրույցների քանակը՝ մարզային կտրվածքով, ինչպես նաև քաղաքային և գյուղական ընտրանքներում ընդգրկված տնային տնտեսությունների թիվը:

ԹՀՀԿ-ն մշակել է չափորոշիչներ ու հատուկ այդ նպատակով կազմված հարցաթերթ՝ ԱՄՆ ՄԶԳ ՄՊՀՀ-ի կողմից պահանջվող տեղեկատվության հիման վրա: Ընդհանուր հաշվով 2008թ.-ի նոյեմբերի 29-ից մինչև դեկտեմբերի 7-ը անց է կացվել 1,004 հարցազրույց³: Դաշտային աշխատանքները կազմակերպվել են շաբաթ-կիրակի օրերին և երեկոյան ժամերին՝ աշխատող բնակչության ներկայացուցչական ընտրանքն ապահովելու համար: Ըստ անհրաժեշտության՝ որակական տվյալները կողավորվել են, և բոլոր տվյալները մուտքագրվել են SPSS (վիճակագրական փաթեթ հասարակական ուսումնասիրությունների համար) վերլուծության համար:

Հարցազրույցների վերջում հարցման մասնակիցներին տրամադրվել են Հայաստանում կենսաթոշակային համակարգում նախատեսվող բարեփոխումների մասին տեղեկատվական թերթիկներ:

Հիմնական արդյունքները

Այս բաժինն ամփոփում է հարցման արդյունքները և բաղկացած է չորս ենթաբաժիններից. գործող կենսաթոշակային համակարգի ըմբռնումը, կենսաթոշակային համակարգի փոփոխությունների մասին իրազեկությունը, կենսաթոշակային համակարգում նախատեսվող բարեփոխումների մասին գիտելիքի մակարդակը, և ֆորմալ ու ոչ ֆորմալ զբաղվածությունը Հայաստանում:

Հարցվածների միջին տարիքը 41 է (տե՛ս Աղյուսակ 24), հարցվածների 35 տոկոսը տղամարդիկ են, 65 տոկոսը՝ կանայք (տե՛ս Աղյուսակ 25): Հարցվածների 35 տոկոսն ավարտել է 10-ամյա միջնակարգ դպրոց, 65 տոկոսը հաճախել կամ ավարտել է համալսարան, քոլեջ/ուսումնարան կամ տեխնիկում (տե՛ս Աղյուսակ 26):

Գործող կենսաթոշակային համակարգի ըմբռնումը.

Մի քանի հարցի օգնությամբ փորձ է արվել պարզել գործող կենսաթոշակային համակարգի ըմբռնումը հարցվածների կողմից:

Հարցվածների 46 տոկոսը նշել է, որ հասկանում է Հայաստանում գործող կենսաթոշակային համակարգը (տե՛ս Աղյուսակներ 9ա և 10): Գյուղաբնակ հարցվածները (53 տոկոս) ավելի հակված են համաձայնելու այդ մտքին, քան քաղաքաբնակ հարցվածները (43

³ Մերժման տոկոսը 7.1 է:

տոկոս)⁴: Բացի այդ, գոյություն ունի վիճակագրական տեսանկյունից նշանակալի, թեև թույլ, դրական կապ (կորելացիա) տարիքի և կենսաթոշակի ձևակերպման միջև. տարեց հարցվածներն ինչ-որ չափով ավելի շատ են հասկանում գործող կենսաթոշակային համակարգը, քան երիտասարդ հարցվածները⁵: Ջրաղվածության կարգավիճակը նույնպես գործոն է, ընդ որում աշխատանք ունեցող հարցվածներն (52 տոկոս) ավելի շատ են հասկանում այդ համակարգը, քան աշխատանք չունեցող հարցվածները (38 տոկոս)⁶: Վիճակագրական տեսանկյունից նշանակալի տարբերություններ գոյություն չունեն Երևանի և տասը մարզերի քաղաքաբնակների, ինչպես նաև տղամարդկանց և կանանց պատասխանների միջև:

Նմանապես, հարցվածների գրեթե կեսը (47 տոկոս) նկատել է, որ եթե 63 տարեկան լիներ այսօր, ապա կկարողանար դիմել կենսաթոշակի համար, քանի որ ունի բավարար տեղեկատվություն (տե՛ս Աղյուսակ 9գ): Գյուղաբնակ հարցվածներն (53 տոկոս) ավելի հակված են համաձայնելու այդ կարծիքին, քան քաղաքաբնակ հարցվածները (43 տոկոս)⁷: Ավելին, թույլ դրական կապ (կորելացիա) գոյություն ունի տարիքի դեպքում, ընդ որում տարեց հարցվածներն ինչ-որ չափով ավելի հակված են համաձայնելու, որ այսօր ունեն բավարար տեղեկատվություն և կարող են դիմել կենսաթոշակների համար, քան երիտասարդ հարցվածները⁸: Ի լրումն, այդ հարցի դեպքում վիճակագրական տեսանկյունից նշանակալի տարբերություն է նկատվել զբաղվածության հիման վրա, ընդ որում աշխատանք ունեցող հարցվածները (50 տոկոս) ավելի հակված են համաձայնելու, որ այսօր ունեն բավարար տեղեկատվություն կենսաթոշակների դիմելու համար, քան աշխատանք չունեցող հարցվածները (41 տոկոս)⁹:

Ճշտելու համար, թե արդյոք հարցվածներն իսկապես հասկանում են գործող կենսաթոշակային համակարգը, նրանց տրվել են մի շարք բաց հարցեր կենսաթոշակների դիմելու մասին:

Երբ հարց է տրվել, թե որտեղ հարցվածները կդիմեին կենսաթոշակների համար, եթե կենսաթոշակի անցնելիս լինեին այսօր, 51 տոկոսը կարողացել է ճիշտ նշել այն կառույցը, որը պատասխանատու է կենսաթոշակների նշանակման համար (տե՛ս Աղյուսակ 11, ճիշտ պատասխաններ են համարվել՝ «Սոցիալական ապահովության պետական ծառայության (ՍԱՊԾ) տարածքային ստորաբաժանում», «Սոցիալական ապահովության պետական ծառայություն» կամ «Սոցիալական ապահովության տարածքային բաժին»): Նշանակալի տարբերություն է նկատվել տարեցների և երիտասարդների կողմից տրված պատասխանների միջև. տարեց հարցվածներն ինչ-որ չափով ավելի հակված են ճիշտ պատասխանելու, քան երիտասարդ հարցվածները¹⁰: Դեռ ավելին, ավելի շատ այլ քաղաքների բնակիչներ (59 տոկոս), քան Երևանի բնակիչներ (44 տոկոս), և ավելի շատ

⁴ Վիճակագրական տեսանկյունից նշանակալի տարբերություն, օգտագործելով T-թեստը՝ նշանակալիությունը՝ 0.000 մակարդակում:

⁵ Պիրսոնի կորելացիոն վերլուծությունը հավասար է 0.169, նշանակալիության 0.000 մակարդակում:

⁶ Վիճակագրական տեսանկյունից նշանակալի տարբերություն, օգտագործելով T-թեստը՝ նշանակալիությունը՝ 0.000 մակարդակում:

⁷ Վիճակագրական տեսանկյունից նշանակալի տարբերություն, օգտագործելով T-թեստը՝ նշանակալիությունը՝ 0.000 մակարդակում:

⁸ Պիրսոնի կորելացիոն վերլուծությունը հավասար է 0.135, նշանակալիության 0.000 մակարդակում:

⁹ Վիճակագրական տեսանկյունից նշանակալի տարբերություն, օգտագործելով T-թեստը՝ նշանակալիությունը՝ 0.001 մակարդակում:

¹⁰ Վիճակագրական տեսանկյունից նշանակալի տարբերություն, օգտագործելով T-թեստը՝ նշանակալիությունը՝ 0.004 մակարդակում:

աշխատանք ունեցող հարցվածներ (56 տոկոս), քան աշխատանք չունեցող հարցվածներ են (45 տոկոս) ճիշտ նշել այդ կառույցը¹¹:

Առանձին հարցի օգնությամբ հարցվածներին խնդրել են թվարկել այն փաստաթղթերը, որոնք անհրաժեշտ է ներկայացնել կենսաթոշակների նշանակման համար: Պատասխանները դասակարգվել են մի քանի խմբի և ներկայացված են Աղյուսակ 12-ում: Հարցվածներից ոչ մեկը չի կարողացել նշել կենսաթոշակների նշանակման համար անհրաժեշտ բոլոր վեց հիմնական փաստաթղթերը (այդ վեց փաստաթղթերն են՝ դիմումը, անձնագիրը, սոցիալական ապահովության քարտը, աշխատանքային գրքույկը, տեղեկանքը աշխատավայրից առ այն, որ սոցիալական ապահովագրության վճարումները կատարվել են կենսաթոշակային հիմնադրամ, և լուսանկարները:) Հարցվածների միայն 1 տոկոսն է կարողացել ճիշտ թվարկել հինգ անհրաժեշտ փաստաթղթերը, մոտ 3 տոկոսը ճիշտ նշել է չորս փաստաթղթերը, իսկ մոտ 21 տոկոսը՝ երեք փաստաթղթերը: Հարցվածների մոտ 56 տոկոսի պատասխանները նույնպես թերի էին. այդ հարցվածները կարողացել են ճիշտ նշել միայն մեկ կամ երկու փաստաթուղթ: Հարցվածների կողմից ամենահաճախ նշված երեք փաստաթղթերն են՝ անձնագիրը, սոցիալական ապահովության քարտը և աշխատանքային գրքույկը: Հարցվածների գրեթե 19 տոկոսը չի կարողացել որևէ պատասխան տալ այդ հարցին: Տարիքի դեպքում վիճակագրական տեսանկյունից նշանակալի տարբերություն չի հայտնաբերվել:

Կոնկրետ հարց է տրվել այն քայլերի մասին, որ մարդիկ պետք է ձեռնարկեն՝ իրենց կենսաթոշակներն ստանալու համար: Հարցվածների մի ամբողջ 70 տոկոս պատասխանել է, որ չգիտի, թե որոնք են այդ քայլերը. այս տոկոսը կարելի է համեմատել հարցվածների այն 47 տոկոսի հետ, որը վերը նշված հարցում հայտնել է, որ այսօր ունի բավարար տեղեկատվություն՝ կենսաթոշակի դիմելու համար: Հարցվածների մոտ 3 տոկոսն է միայն ճիշտ բացատրել, որ Հայաստանում կենսաթոշակի դիմելու համար մարդիկ պետք է բոլոր աշխատավայրերից ձեռք բերեն տեղեկանքներ առ այն, որ սոցիալական ապահովագրության վճարումները կատարվել են կենսաթոշակային հիմնադրամ, ձեռք բերեն հաշմանդամության կարգավիճակը հաստատող տեղեկանքներ (անհրաժեշտության դեպքում) և հանձնեն այս փաստաթղթերը մյուս անհրաժեշտ փաստաթղթերի հետ միասին ՍԱՊԾ տարածքային բաժին: Քսան տոկոսն ասել է, որ դիմում կներկայացնեն ՍԱՊԾ տարածքային բաժին և տեղում կիմանար հետագա քայլերի մասին: Աղյուսակ 13-ը ներկայացնում է քայլերի մասին պատասխանների մանրամասն տեղեկատվությունը: Տարեցների և երիտասարդների պատասխանների միջև վիճակագրական տեսանկյունից նշանակալի տարբերություն գոյություն չունի:

Հարցվածներին նաև խնդրել են պատասխանել, թե երբ են կենսաթոշակները վերջին անգամ բարձրացվել Հայաստանում¹²: Հարցվածների 56 տոկոսը ճիշտ է հիշել, որ կենսաթոշակները բարձրացվել են 2008թ.-ի հունվարին (տե՛ս Աղյուսակ 8):

Կենսաթոշակային համակարգի փոփոխությունների մասին իրազեկությունը.

Մի շարք հարցերի միջոցով փորձ է արվել պարզել, թե արդյոք հարցվածները լսել են Հայաստանում կենսաթոշակային համակարգում և ընթացակարգերում նախատեսվող փոփոխությունների մասին: Հարցվածների 43 տոկոսը (n=436) հայտնել է, որ լսել է այդ փոփոխությունների մասին (տե՛ս Աղյուսակ 4):

Այս հարցի պատասխանների ճշգրտությունն ստուգելու համար՝ այդ 436 հարցվածներին տրվել է լրացուցիչ հարց (որտեղ թույլատրելի էին մեկից ավելի

¹¹ χ^2 քառակուսին (Chi-square) ≤ 0.05 :

¹² Հարցագրույցներն անց են կացվել 2008-ի նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին:

պատասխաններ) այն մասին, թե ինչ են նրանք լսել կենսաթոշակային համակարգի փոփոխությունների մասին: Այդ 436 հարցվածների 67 տոկոսը (n=292), ովքեր հայտնել են, որ լսել են այդ փոփոխությունների մասին, նշել է կենսաթոշակների առաջիկա բարձրացումը: Մոտ 8 տոկոսը (n=34) նշել է նոր կուտակային համակարգի մասին՝ կուտակային հաշիվների կիրառմամբ, 4 տոկոսը հայտնել է կենսաթոշակների նշանակման համար սահմանված տարիքի փոփոխությունների մասին: Մոտ 19 տոկոսը չի կարողացել ասել, թե ինչ տեղեկատվություն է լսել այդ փոփոխությունների հետ կապված: Այս արդյունքը ցույց է տալիս, որ հարցվածները տեղյակ չեն կենսաթոշակային համակարգի փոփոխությունների մասին այն ծավալով, որ նշում են (տե՛ս Աղյուսակներ 5 և 5ա-ն, որտեղ փոփոխությունների մասին բոլոր պատասխանները դասակարգված են ըստ խմբերի):

Երբ հարց է տրվել (որտեղ թույլատրելի էին մեկից ավելի պատասխաններ), թե որտեղից են հարցվածները լսել կենսաթոշակային համակարգի փոփոխությունների մասին, 436 հարցվածների 82 տոկոսը (n=358) նշել է հեռուստատեսությունը: Այդ 436 հարցվածների 6 տոկոսը (n=28) այդ փոփոխությունների մասին տեղեկատվությունն ստացել է թերթերից, մեկ այլ 6 տոկոսը (n=28)՝ բարեկամներից, ընկերներից և հարևաններից, և մեկ այլ 6 տոկոսը (n=27) լսել է այդ փոփոխությունների մասին «փողոցից», որպես բամբասանք (տե՛ս Աղյուսակներ 6 և 6ա-ն, որոնք ներկայացնում են տեղեկատվության աղբյուրների մասին բոլոր պատասխանները, որոնք հարցվածները հայտնել են բաց հարցի ժամանակ):

Հարցվածների միայն 6 տոկոսն է (n=63) կարողացել ճիշտ պատասխանել, որ կենսաթոշակային համակարգի փոփոխությունները տեղի կունենան 2010թ.-ին (տե՛ս Աղյուսակ 7): Պարզելու համար, թե արդյոք հարցվածներն իրազեկ են այդ փոփոխությունների իրականացման տարեթվի մասին՝ նրանց տրվել է ևս մի քանի հարց, որոնց արդյունքները կքննարկվեն հաջորդ բաժնում:


Երբ հարցվածներին խնդրել են գնահատել, թե որքանով են իրենք լավատեղյակ կենսաթոշակային համակարգի առաջիկա փոփոխությունների մասին, մոտ 30 տոկոսը նշել է, որ լավատեղյակ է այդ փոփոխությունների մասին (տե՛ս Աղյուսակ 9բ):

Կենսաթոշակային համակարգում նախատեսվող բարեփոխումների մասին գիտելիքի մակարդակը.

Կենսաթոշակային համակարգում նախատեսվող բարեփոխումների մասին գիտելիքի մակարդակը չափելու նպատակով հարցվածների համար կարդացել են մի շարք արտահայտություններ նոր կենսաթոշակային համակարգի մասին և խնդրել են նշել, թե արդյոք այդ նախադասություններից յուրաքանչյուրը ճշմարիտ է, թե կեղծ: Որոշ ձևակերպումներ ներկայացվել են և՛ ճիշտ, և՛ սխալ տարբերակներով՝ բացահայտելու համար այն դեպքերը, երբ հարցվածները կռահել են ճիշտ պատասխանները:

Գծապատկեր Ա-ում ներկայացված են յուրաքանչյուր նախադասության ճիշտ պատասխանների տոկոսները:

Գծապատկեր Ա. Կենսաթոշակային համակարգի բարեփոխումների մասին արտահայտություններին տրված ճիշտ պատասխանների տոկոսները



Նախ և առաջ, հարցվածներին տրվել է երկու հակադիր հարց նոր կենսաթոշակային համակարգի իրականացման տարեթվի մասին՝ նրանց գիտելիքի մակարդակը ստուգելու համար:

Հարցվածների 38 տոկոսը ճիշտ գիտեր, որ «նոր կենսաթոշակային համակարգը կսկսի գործել 2015թ.-ին» ձևակերպումը սխալ է, և մոտ 35 տոկոսը ճիշտ գիտեր, որ նոր կենսաթոշակային համակարգը կսկսի գործել 2010թ.-ին (տե՛ս Աղյուսակներ 14ա և 14բ): Ճշմարիտ և կեղծ տարբերակներով ձևակերպված այս հարցերին պատասխանելիս հարցվածների մոտ մեկ երրորդը ճիշտ է կռահել այն տարեթիվը, երբ կսկսի գործել նոր կենսաթոշակային համակարգը (միայն 6 տոկոսն է պատասխանել «2010թ.» վերը նշված բաց հարցի ժամանակ):

Նմանապես, երկու հակադիր հարց է տրվել տարիքի հիման վրա տարբեր կենսաթոշակային համակարգերի կիրառման վերաբերյալ: Հարցվածների 40 տոկոսը ճիշտ

գիտեր, որ «առաջին մի քանի տարիների համար նոր կենսաթոշակային համակարգը տարբեր կլինի նրանց համար, ովքեր 40 տարեկանից բարձր են, և նրանց համար, ովքեր 40 տարեկանից ցածր են»: Հարցվածների մոտ 37 տոկոսը ճիշտ գիտեր, որ «առաջին մի քանի տարիների համար նոր կենսաթոշակային համակարգը տարբեր կլինի նրանց համար, ովքեր 30 տարեկանից բարձր են, և նրանց համար, ովքեր 30 տարեկանից ցածր են» ձևակերպումը սխալ է (տե՛ս Աղյուսակներ 14գ և 14դ): Հարցվածների մոտ 40 տոկոսը ճիշտ գիտեր, որ առաջին մի քանի տարիների համար կենսաթոշակային համակարգը տարբեր կլինի նրանց համար, ովքեր 40 տարեկանից բարձր են, և նրանց համար, ովքեր 40 տարեկանից ցածր են, և տարբեր չի լինի նրանց համար, ովքեր 30 տարեկանից բարձր են, և նրանց համար, ովքեր 30 տարեկանից ցածր են:

Հարցվածների մոտ 59 տոկոսը ճիշտ գիտեր, որ «նոր կենսաթոշակային համակարգում այն անձինք, ովքեր երբեք չեն աշխատել, չեն ստանա կենսաթոշակ» ձևակերպումը սխալ է (տե՛ս Աղյուսակ 14ե)¹³:

Հարցվածների միայն 23 տոկոսը ճիշտ գիտեր, որ «նոր կենսաթոշակային համակարգում աշխատողները պետք է առնվազն հինգ տարի աշխատեն աշխատանքային պայմանագրերով, որպեսզի ստանան լրիվ կենսաթոշակ» ձևակերպումը սխալ է (տե՛ս Աղյուսակ 14ը):

Հարցվածների մոտ 52 տոկոսը ճիշտ գիտեր, որ «նոր կենսաթոշակային համակարգում 40 տարեկանից ցածր անձինք պետք է գումար փոխանցեն նոր կուտակային համակարգ, և այդ գումարը կներդրվի կենսաթոշակների համար» (տե՛ս Աղյուսակ 14զ):

Հարցվածների գրեթե կեսը ճիշտ գիտեր, որ «այդ նոր փոփոխությունները չեն ազդելու այն անձանց վրա, ովքեր արդեն անցել են կենսաթոշակի և ստանում են կենսաթոշակ» (տե՛ս Աղյուսակ 14ի):

Հարցվածների 45 տոկոսը ճիշտ գիտեր, որ նոր կենսաթոշակային համակարգում կենսաթոշակային կուտակային հաշվից ստացված գումարը, կախված է այն գումարից, որը առկա է այդ հաշվի վրա, և նրանից, թե ինչպես է այն ներդրվել (տե՛ս Աղյուսակ 14է):

Մոտ 58 տոկոսը ճիշտ գիտեր, որ «նոր կենսաթոշակային համակարգում, եթե Ղուք աշխատող եք, Ղուք պետք է ունենաք աշխատանքային պայմանագիր՝ կենսաթոշակային կուտակային հաշվին ներդրումներ կատարելու համար» (տե՛ս Աղյուսակ 14թ)¹⁴:

Բաց հարցի օգնությամբ գնահատվել է հարցվածների իրազեկությունն ակտիվների կառավարիչների գործունեության մասին: Հարցվածների մոտ 98 տոկոսը տեղյակ չէ ակտիվների կառավարիչների գործունեության մասին, և միայն մոտ երեք տոկոսն է կարողացել ճիշտ ասել, թե ինչ է անում ակտիվների կառավարիչը (տե՛ս Աղյուսակ 15):

Ի լրումն, հարցվածների 31 տոկոսը ճիշտ է նշել, որ «նոր կենսաթոշակային համակարգում մասնավոր ակտիվների կառավարիչները կներդնեն Ձեր խնայողությունները Ձեզ համար» (տե՛ս Աղյուսակ 14ժ):

¹³ Նույն պայմանը գոյություն ունի նաև գործող կենսաթոշակային համակարգում. նրանք, ովքեր երբեք չեն աշխատել, ստանում են կենսաթոշակ:

¹⁴ Նույն պայմանը գոյություն ունի նաև գործող կենսաթոշակային համակարգում. աշխատանքային պայմանագիր ունենալը պարտադիր է:

Ֆորմալ և ոչ ֆորմալ զբաղվածությունը Հայաստանում

Հարցվածների մոտ կեսը (49 տոկոս) աշխատանք է փնտրում: Այս հարցը տրվել է բոլոր հարցվածներին, նույնիսկ եթե նրանք հարցազրույցի պահին ունեին աշխատանք (տե՛ս Աղյուսակ 16):

Հարցվածների գրեթե 60 տոկոսն ունի կես դրույք կամ լրիվ դրույք աշխատանք, ներառյալ ինքնազբաղվածությունը (տե՛ս Աղյուսակ 17): Աշխատանք ունեցող 600 հարցվածներին հարցրել են, թե արդյոք իրենք աշխատում են ուրիշների մոտ, ինքնազբաղված են, թե գործատու են: Այդ հարցվածների մոտ 61 տոկոսը վարձու աշխատող է, մոտ 34 տոկոսն ինքնազբաղված է, և մոտ վեց տոկոսը՝ գործատու (տե՛ս Աղյուսակ 18):

Վարձու աշխատողներից 363 հարցվածների 86 տոկոսը նշել է, որ ունի աշխատանքային պայմանագիր (տե՛ս Աղյուսակ 19): Վարձու աշխատող և աշխատանքային պայմանագիր ունեցող հարցվածների գերակշռող մեծամասնությունը (95 տոկոս) նշել է, որ իրենց գործատուները վճարումներ են կատարում սոցիալական կենսաթոշակային հիմնադրամ իրենց համար (տե՛ս Աղյուսակ 20):

Վարձու աշխատող և աշխատանքային պայմանագիր չունեցող 50 հարցվածներին խնդրել են բացատրել աշխատանքային պայմանագիր չունենալու պատճառը: Այդ 50 հարցվածների 23 տոկոսը նշել է, որ պայմանագիր ունենալն անհրաժեշտ և կարևոր չէ, 16 տոկոսը նշել է, որ իրենց երբեք չեն առաջարկել պայմանագիր ստորագրել, 14 տոկոսն ասել է, որ նոր աշխատող է և մոտ ապագայում կունենա պայմանագիր: Մեկ այլ 14 տոկոսը պատասխանել է, որ իր գործատուն հրաժարվում է պայմանագիր կնքել՝ հարկերից խուսափելու համար: Աղյուսակներ 21 և 21ա-ում ներկայացված է բաց հարցի միջոցով ստացված պատասխանների ամբողջական ցանկը:

202 ինքնազբաղված հարցվածներին հարցրել են, թե արդյոք իրենք գրանցված են որպես անհատ ձեռներեց: Այդ հարցվածների միայն 11 տոկոսն է նշել, որ գրանցված է (տե՛ս Աղյուսակ 22):

35 գործատու հարցվածներին հարցրել են, թե արդյոք իրենք ունեն աշխատանքային պայմանագրեր իրենց աշխատողների հետ: Այդ գործատուների մոտ 86 տոկոսն ասել է, որ ունի այդպիսի պայմանագրեր (տե՛ս Աղյուսակ 23):

Հիմնական արդյունքների ամփոփում

Այս բաժինն ամփոփում է կենսաթոշակային համակարգի բարեփոխումների իրազեկության մասին հիմնային հարցման զեկույցի հիմնական արդյունքները:

Գործող կենսաթոշակային համակարգի ընթրնունը

- Հարցվածների կեսը նկատել է, որ հասկանում է Հայաստանում գործող կենսաթոշակային համակարգը, և մյուս կեսը կարծում է, որ եթե 63 տարեկան լինեի այսօր, ապա կկարողանար դիմել կենսաթոշակի համար, քանի որ ունի բավարար տեղեկատվություն:
- Հարցվածների կեսը ճիշտ գիտի, թե որտեղ դիմել կենսաթոշակների համար, ընդ որում ավելի շատ աշխատանք ունեցող հարցվածներ, քան աշխատանք չունեցող հարցվածներ են ճիշտ պատասխանել այդ հարցին:
- Հացվածների մոտ 55 տոկոսն է կարողացել նշել կենսաթոշակների նշանակման համար անհրաժեշտ վեց փաստաթղթերից մեկ կամ երկուսը:
- Հարցվածների միայն 3 տոկոսը գիտի, թե ինչ քայլեր պետք է մարդիկ ձեռնարկեն՝ կենսաթոշակներն ստանալու համար:
- Տաս հարցվածներից մոտ վեցը ճիշտ են հիշել, որ կենսաթոշակները բարձրացվել են 2008թ.-ի հունվարին:

Կենսաթոշակային համակարգի փոփոխությունների մասին իրազեկությունը

- Տասը հարցվածներից երեքը կարծում են, որ լավատեյակ են կենսաթոշակային համակարգի փոփոխությունների մասին:
- Հինգ հարցվածներից երկուսը հայտնել են, որ լսել են Հայաստանում կենսաթոշակային համակարգի և ընթացակարգերի նախատեսվող փոփոխությունների մասին, ընդ որում այդ հարցվածների մեծամասնությունը նշել է կենսաթոշակների առաջիկա բարձրացումը:
- Կենսաթոշակային համակարգի փոփոխությունների մասին լսած տասը հարցվածներից ութը այդ փոփոխությունների մասին տեղեկատվությունն ստացել են հեռուստատեսությունից:
- Հարցվածների միայն 6 տոկոսն է կարողացել ճիշտ պատասխանել, որ կենսաթոշակային համակարգի փոփոխությունները տեղի կունենան 2010թ.-ին:

Կենսաթոշակային համակարգում նախատեսվող բարեփոխումների մասին գիտելիքի մակարդակը

- Հարցվածների 60 տոկոսը ճիշտ գիտի, որ նոր կենսաթոշակային համակարգում այն անձինք, ովքեր երբեք չեն աշխատել, կենսաթոշակ կստանան: Նույն պայմանը գոյություն ունի նաև գործող կենսաթոշակային համակարգում:
- Հարցվածների մոտ 60 տոկոսը ճիշտ գիտի, որ նոր կենսաթոշակային համակարգում աշխատողը պետք է ունենա աշխատանքային պայմանագիր՝ կենսաթոշակային կուտակային հաշվին ներդրումներ կատարելու համար: Նույն պայմանը գոյություն ունի նաև գործող կենսաթոշակային համակարգում:
- Հարցվածների գրեթե կեսը գիտի, որ նոր կենսաթոշակային համակարգում 40 տարեկանից ցածր անձինք պետք է նոր կուտակային համակարգ փոխանցեն գումար, որը կներդրվի կենսաթոշակների համար, որ նոր փոփոխությունները չեն ազդելու այն անձանց վրա, ովքեր արդեն անցել են կենսաթոշակի և ստանում են կենսաթոշակ, որ

առաջին մի քանի տարիների համար նոր կենսաթոշակային համակարգը տարբեր կլինի նրանց համար, ովքեր 40 տարեկանից բարձր են, և նրանց համար, ովքեր 40 տարեկանից ցածր են, և որ կենսաթոշակային կուտակային հաշվից ստացած գումարը կախված կլինի այն գումարից, որ առկա է այդ հաշվի վրա, և նրանից, թե ինչպես է այն ներդրվել:

- Հարցվածների մոտ 80 տոկոսը սխալվում էր, երբ կարծում էր, որ նոր կենսաթոշակային համակարգում աշխատողները պետք է առնվազն հինգ տարի աշխատեն աշխատանքային պայմանագրերով, որպեսզի ստանան լրիվ կենսաթոշակ:
- Հարցվածներից գրեթե ոչ մեկը (երեք տոկոս) չգիտի, թե ինչ է անում ակտիվների կառավարիչը, և գրեթե 70 տոկոսը չգիտի, որ մասնավոր ակտիվների կառավարիչները կներդնեն աշխատողների խնայողությունները իրենց համար:

Ֆորմալ և ոչ ֆորմալ զբաղվածությունը Հայաստանում

- Տասը հարցվածներից վեցը ունեն կես դրույք կամ լրիվ դրույք աշխատանք, ներառյալ ինքնազբաղվածությունը: Այդ աշխատող հարցվածներից մոտ 60 տոկոսը վարձու աշխատող է, 34 տոկոսը ինքնազբաղված է, իսկ մոտ վեց տոկոսը՝ գործատու:
- Վարձու աշխատող տաս հարցվածներից ինն ունեն աշխատանքային պայմանագիր:
- Ինքնազբաղված հարցվածներից միայն մոտ 10 տոկոսն է գրանցված, որպես անհատ ձեռներեց:
- Գործատու հինգ հարցվածներից չորսն ունեն աշխատանքային պայմանագրեր աշխատողների հետ:

Աղյուսակ 1. Հարցագրույցների քանակն ըստ մարզերի		
	Քանակը	Տոկոսը
Երևան	351	35.0
Արագածոտն	43	4.3
Արարատ	85	8.5
Արմավիր	86	8.6
Գեղարքունիք	74	7.4
Կոտայք	84	8.4
Լոռի	88	8.8
Շիրակ	88	8.8
Սյունիք	48	4.8
Տավուշ	40	4.0
Վայոց Ձոր	17	1.7
Ընդամենը	1,004	100.0

Աղյուսակ 2. Հարցագրույցների քանակն ըստ քաղաքային և գյուղական բնակավայրերի		
	Քանակը	Տոկոսը
Քաղաքային	650	64.7
Գյուղական	354	35.3
Ընդամենը	1,004	100.0

Աղյուսակ 3. Հարցագրույցների քանակն ըստ Երևանի և տասը մարզերի		
	Քանակը	Տոկոսը
Երևան	351	35.0
Մարզեր	653	65.0
Ընդամենը	1,004	100.0

Աղյուսակ 4. Լսել է Հայաստանում կենսաթոշակային համակարգում և ընթացակարգերում նախատեսվող փոփոխությունների մասին		
	Քանակը	Տոկոսը
Այո	436	43.4
Ոչ	568	56.6
Ընդամենը	1,004	100.0

Աղյուսակ 5. Հայաստանում կենսաթոշակային համակարգի փոփոխությունների մասին տեղեկացվածությունը

(Թույլատրելի են մեկից ավելի պատասխաններ, դասակարգված նվազման կարգով)

	Քանակը	Տոկոսը ընդհանուր թվից (436)
Կենսաթոշակների բարձրացում	292	67.0
Նոր կուտակային համակարգի/կուտակային հաշիվների կիրառում	34	7.8
Փոփոխություններ կենսաթոշակների նշանակման համար սահմանված տարիքում	18	4.1
Աշխատողները կկառավարեն սոցիալական վճարումները	3	0.7
Աշխատավարձից գանձվող հարկերի բարձրացում	3	0.7
Կենսաթոշակի չափը կախված կլինի աշխատավարձի չափից և վճարված հարկերից	3	0.7
Աշխատողները կկարողանան ներդնել կուտակված գումարը	2	0.5
Այլ	9	2.1
Զգիտեմ/չեմ հիշում	83	19.0

Աղյուսակ 5ա. Աղյուսակ 5-ի «այլ» պատասխանները

	Քանակը
Մարդիկ կստանան կենսաթոշակները ներդրումային համակարգով	1
Լրացուցիչ գումար կավելացվի բազային կենսաթոշակի վրա	1
Կարող են վճարել սահմանված գումար 40 տարեկան դառնալուց առաջ	1
500 ՀՀ դրամի չափով փոխանցումներ կկատարվեն կենսաթոշակային հիմնադրամ	1
Դու պետք է ներդրումներ կատարես՝ ապագայում բարձր կենսաթոշակ ստանալու համար	1
Աշխատանքային ստաժի վերահաշվարկ	1
Կատարել ամսեկան վճարումներ՝ կենսաթոշակային տարիքում կենսաթոշակ ստանալու համար	1
Երբ աշխատողը կենսաթոշակի անցնի, նա կստանա այն գումարը, որը փոխանցվել է կենսաթոշակային հիմնադրամ 1990-ից սկսած՝ կա՛մ միանգամից, կա՛մ ժամանակի ընթացքում	1
Կգանձվի նոր միասնական հարկ	1

Աղյուսակ 6. Հայաստանում կենսաթոշակային համակարգի փոփոխությունների մասին տեղեկատվության աղբյուրը		
<i>(Թույլատրելի են մեկից ավելի պատասխաններ, դասակարգված նվազման կարգով)</i>		
	Քանակը	Տոկոսը ընդհանուր թվից (436)
Հեռուստատեսություն	358	82.1
Թերթեր	28	6.4
Բարեկամներ/ընկերներ/ հարևաններ	28	6.4
Փողոցից, բամբասանքներ	27	6.2
Ռադիո	21	4.8
Աշխատավայր/համալսարան	20	4.6
Ինտերնետ	2	0.5
Այլ	8	1.8
Զգիտենմ/չեն հիշում	2	0.5

Աղյուսակ 6ա. Աղյուսակ 6-ի «այլ» պատասխանները	
	Քանակը
Կենսաթոշակային հիմնադրամի աշխատողներից	2
Քաղաքապետարանի աշխատակիցներից	2
Վերապատրաստման դասընթացի ժամանակ	2
Հարկային տեսչությունից	1
Ազգային ժողովից	1

Աղյուսակ 7. Ճիշտ գիտի, թե որ թվականին տեղի կունենան կենսաթոշակային համակարգի փոփոխությունները Հայաստանում		
	Քանակը	Տոկոսը
Ճիշտ պատասխան	63	6.3
Սխալ պատասխան	311	31.0
Զգիտենմ/չեն կարող ասել	630	62.7
Ընդամենը	1,004	100.0

Աղյուսակ 8: Ճիշտ գիտի, թե երբ են կենսաթոշակները վերջին անգամ բարձրացվել Հայաստանում		
	Քանակը	Տոկոսը
Ճիշտ պատասխան	563	56.1
Սխալ պատասխան	198	19.7
Չգիտեն/չեն կարող ասել	243	24.2
ԸՆդամենը	1,004	100.0

Աղյուսակ 9ա. Ես հասկանում եմ Հայաստանում գործող կենսաթոշակային համակարգը				
	Քանակը	Տոկոսը	Իրական տոկոսը**	Գումարային տոկոսը
Խիստ համաձայն եմ	63	6.3	6.6	6.6
Համաձայն եմ	379	37.7	39.7	46.3
Համաձայն չեմ	286	28.5	30.0	76.3
Բոլորովին համաձայն չեմ	226	22.5	23.7	100.0
Չգիտեն/չեն կարող ասել	50	5.0	100.0	
ԸՆդամենը	1,004	100.0		

Մոդան=2, Միջինը=2.71, Սեդիանը=3.00 (1=խիստ համաձայն եմ և 4=բոլորովին համաձայն չեմ, «չգիտեն/չեն կարող ասել» պատասխաններն ընդգրկված չեն)

**Իրական տոկոսն առանց «չգիտեն/չեն կարող ասել» պատասխանների է

Աղյուսակ 9բ. Ես լավատեղյակ եմ այն փոփոխությունների մասին, որոնք իրականացվում են կենսաթոշակային համակարգում				
	Քանակը	Տոկոսը	Իրական տոկոսը	Գումարային տոկոսը
Խիստ համաձայն եմ	47	4.7	4.9	4.9
Համաձայն եմ	237	23.6	24.6	29.5
Համաձայն չեմ	394	39.2	40.9	70.3
Բոլորովին համաձայն չեմ	286	28.5	29.7	100.0
Չգիտեն/չեն կարող ասել	40	4.0	100.0	
ԸՆդամենը	1,004	100.0		

Մոդան=3, Միջինը=2.95, Սեդիանը=3.00 (1=խիստ համաձայն եմ և 4=բոլորովին համաձայն չեմ, «չգիտեն/չեն կարող ասել» պատասխաններն ընդգրկված չեն)

Աղյուսակ 9գ. Եթե ես 63 տարեկան լինեի այսօր, ես ունենալու բավարար տեղեկատվություն՝ կենսաթոշակի դիմելու համար:

	Քանակը	Տոկոսը	Իրական տոկոսը	Գումարային տոկոսը
Խիստ համաձայն եմ	96	9.6	10.1	10.1
Համաձայն եմ	345	34.4	36.4	46.5
Համաձայն չեմ	288	28.7	30.3	76.8
Բոլորովին համաձայն չեմ	220	21.9	23.2	100.0
Զգիտեմ/չեմ կարող ասել	55	5.5	100.0	
Ընդամենը	1,004	100.0		

Մոդան=2, Միջինը=2.67, Մեդիանը=3.00 (1=խիստ համաձայն եմ և 4=բոլորովին համաձայն չեմ, «չգիտեմ/չեմ կարող ասել» պատասխաններն ընդգրկված չեն)

Աղյուսակ 10. Կարծիքների միջին արժեքները՝ ներկայացված Աղյուսակներ 9ա-9գ-ում

(դասակարգված աճման կարգով)

	Միջինը	Մոդան	Մեդիանը
Եթե ես 63 տարեկան լինեի այսօր, ես ունենալու բավարար տեղեկատվություն՝ կենսաթոշակի դիմելու համար	2.67	2	3.00
Ես հասկանում եմ Հայաստանում գործող կենսաթոշակային համակարգը	2.71	2	3.00
Ես լավատեղյակ եմ այն փոփոխությունների մասին, որոնք իրականացվում են կենսաթոշակային համակարգում:	2.95	3	3.00

1=խիստ համաձայն եմ և 4=բոլորովին համաձայն չեմ, «չգիտեմ/չեմ կարող ասել» պատասխաններն ընդգրկված չեն)

Աղյուսակ 11. Ճիշտ գիտի, թե որտեղ դիմել կենսաթոշակի համար Հայաստանում, եթե կենսաթոշակի անցնելիս լինեի այսօր

	Քանակը	Տոկոսը
Ճիշտ պատասխան	515	51.3
Սխալ պատասխան	266	26.5
Զգիտեմ/չեմ կարող ասել	223	22.2
Ընդամենը	1,004	100.0

Աղյուսակ 12. Ճիշտ գիտի, թե ինչ փաստաթղթեր պետք է մարդիկ ներկայացնեն կենսաթոշակի նշանակման համար Հայաստանում		
	Քանակը	Տոկոսը
Բոլոր վեց հիմնական փաստաթղթերը ճիշտ են նշված	0	0.0
Թերի, վեց հիմնական փաստաթղթերից հինգն են ճիշտ նշված	7	0.7
Թերի, վեց հիմնական փաստաթղթերից չորսն են ճիշտ նշված	28	2.8
Թերի, վեց հիմնական փաստաթղթերից երեքն են ճիշտ նշված	208	20.7
Թերի, վեց հիմնական փաստաթղթերից մեկը կամ երկուսն են ճիշտ նշված	560	55.8
Բոլոր նշված փաստաթղթերը սխալ են	11	1.1
Չգիտեմ/չեմ կարող ասել	190	18.9
Ընդամենը	1,004	100.0

Աղյուսակ 13. Ճիշտ գիտի, թե մարդիկ ինչ քայլեր պետք է ձեռնարկեն՝ Հայաստանում իրենց կենսաթոշակներն ստանալու համար		
	Քանակը	Տոկոսը
Ձեռք բերել տեղեկանքներ բոլոր աշխատավայրերից առ այն, որ սոցիալական վճարումները կատարվել են կենսաթոշակային հիմնադրամ, ձեռք բերել հաշմանդամության կարգավիճակը հաստատող տեղեկանքներ (անհրաժեշտության դեպքում) և հանձնել այս փաստաթղթերը մյուս անհրաժեշտ փաստաթղթերի հետ միասին Սոցիալական ապահովության տարածքային բաժին	28	2.8
Դիմում ներկայացնել Սոցիալական ապահովության տարածքային բաժին և իմանալ հետագա քայլերի մասին	202	20.1
Դիմում ներկայացնել քաղաքապետարան/ գյուղապետարան/ մարզպետարան և իմանալ հետագա քայլերի մասին	36	3.6
Դիմում ներկայացնել Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն և իմանալ հետագա քայլերի մասին	21	2.1
Դիմել տեղական կոմունալ ծառայություն/ համատիրություն և իմանալ հետագա քայլերի մասին	5	0.5
Դիմել փոստի բաժանմունք և իմանալ հետագա քայլերի մասին	3	0.3
Դիմել գործատուին կամ աշխատավայրում մեկ այլ անձի և իմանալ հետագա քայլերի մասին	2	0.2
Չգիտեմ/չեմ կարող ասել	707	70.4
Ընդամենը	1,004	100.0

Աղյուսակ 14ա. Նոր կենսաթոշակային համակարգը կսկսի գործել 2015-ին		
	Քանակը	Տոկոսը
Ճշմարիտ է (սխալ պատասխան/չգիտի)	618	61.6
Կեղծ է (ճիշտ պատասխան)	386	38.4
Ընդամենը	1,004	100.0

Աղյուսակ 14բ. Նոր կենսաթոշակային համակարգը կսկսի գործել 2010-ին		
	Քանակը	Տոկոսը
Ճշմարիտ է (ճիշտ պատասխան)	346	34.5
Կեղծ է (սխալ պատասխան/չգիտի)	658	65.5
Ընդամենը	1,004	100.0

Աղյուսակ 14գ. Առաջին մի քանի տարիների համար նոր կենսաթոշակային համակարգը տարբեր կլինի նրանց համար, ովքեր 40 տարեկանից բարձր են, և նրանց համար, ովքեր 40 տարեկանից ցածր են		
	Քանակը	Տոկոսը
Ճշմարիտ է (ճիշտ պատասխան)	405	40.3
Կեղծ է (սխալ պատասխան/չգիտի)	599	59.7
Ընդամենը	1,004	100.0

Աղյուսակ 14դ. Առաջին մի քանի տարիների համար նոր կենսաթոշակային համակարգը տարբեր կլինի նրանց համար, ովքեր 30 տարեկանից բարձր են, և նրանց համար, ովքեր 30 տարեկանից ցածր են		
	Քանակը	Տոկոսը
Ճշմարիտ է (սխալ պատասխան/չգիտի)	638	63.5
Կեղծ է (ճիշտ պատասխան)	366	36.5
Ընդամենը	1,004	100.0

Աղյուսակ 14ե. Նոր կենսաթոշակային համակարգում այն անձինք, ովքեր երբեք չեն աշխատել, չեն ստանա կենսաթոշակ		
	Քանակը	Տոկոսը
Ճշմարիտ է (սխալ պատասխան/չգիտի)	415	41.3
Կեղծ է (ճիշտ պատասխան)	589	58.7
Ընդամենը	1,004	100.0

Աղյուսակ 14գ. Նոր կենսաթոշակային համակարգում 40 տարեկանից ցածր անձինք պետք է գումար փոխանցեն նոր կուտակային համակարգ, և այդ գումարը կներդրվի կենսաթոշակների համար		
	Քանակը	Տոկոսը
Ճշմարիտ է (ճիշտ պատասխան)	520	51.8
Կեղծ է (սխալ պատասխան/չգիտի)	484	48.2
Ընդամենը	1,004	100.0

Աղյուսակ 14ե. Նոր կենսաթոշակային համակարգում այն գումարը, որ Դուք կստանաք կենսաթոշակային կուտակային հաշվից, կախված է այն գումարից, որ Դուք ունեք այդ հաշվի վրա, և նրանից, թե ինչպես է այն ներդրվել		
	Քանակը	Տոկոսը
Ճշմարիտ է (ճիշտ պատասխան)	454	45.2
Կեղծ է (սխալ պատասխան/չգիտի)	550	54.8
Ընդամենը	1,004	100.0

Աղյուսակ 14ը. Նոր կենսաթոշակային համակարգում աշխատողները պետք է առնվազն 5 տարի աշխատեն աշխատանքային պայմանագրերով		
	Քանակը	Տոկոսը
Ճշմարիտ է (սխալ պատասխան/չգիտի)	772	76.9
Կեղծ է (ճիշտ պատասխան)	232	23.1
Ընդամենը	1,004	100.0

Աղյուսակ 14բ. Նոր կենսաթոշակային համակարգում, եթե Դուք աշխատող եք, Դուք պետք է ունենաք աշխատանքային պայմանագիր՝ կենսաթոշակային կուտակային հաշվին ներդրումներ կատարելու համար		
	Քանակը	Տոկոսը
Ճշմարիտ է (ճիշտ պատասխան)	579	57.7
Կեղծ է (սխալ պատասխան/չգիտի)	425	42.3
Ընդամենը	1,004	100.0

Աղյուսակ 14ժ. Նոր կենսաթոշակային համակարգում մասնավոր ակտիվների կառավարիչները կներդնեն Ձեր խնայողությունները Ձեզ համար		
	Քանակը	Տոկոսը
Ճշմարիտ է (ճիշտ պատասխան)	311	31.0
Կեղծ է (սխալ պատասխան/չգիտի)	693	69.0
Ընդամենը	1,004	100.0

Աղյուսակ 14ի. Այդ նոր փոփոխությունները չեն ազդելու այն անձանց վրա, ովքեր արդեն անցել են կենսաթոշակի և ստանում են կենսաթոշակ		
	Քանակը	Տոկոսը
Ճշմարիտ է (ճիշտ պատասխան)	501	49.9
Կեղծ է (սխալ պատասխան/չգիտի)	503	50.1
Ընդամենը	1,004	100.0

Աղյուսակ 15. Ճիշտ գիտի, թե ինչ է անում ակտիվների կառավարիչը		
	Քանակը	Տոկոսը
Ճիշտ պատասխան	25	2.5
Սխալ պատասխան	82	8.2
Չգիտեմ/չեն կարող ասել	897	89.3
Ընդամենը	1,004	100.0

Աղյուսակ 16. Ներկայումս փնտրում է աշխատանք		
	Քանակը	Տոկոսը
Այո	494	49.2
Ոչ	510	50.8
Ընդամենը	1,004	100.0

Աղյուսակ 17. Ունի կես դրույքով կամ լրիվ դրույքով աշխատանք, ներառյալ ինքնագրադավանությունը		
	Քանակը	Տոկոսը
Այո	600	59.8
Ոչ	404	40.2
Ընդամենը	1,004	100.0

Աղյուսակ 18. Վարձու աշխատող, ինքնագրաված է, թե՞ գործատու է		
	Քանակը	Տոկոսը
Աշխատում է ուրիշի մոտ	363	60.5
Ինքնագրաված է	202	33.7
Գործատու է	35	5.8
Ընդամենը	600	100.0

Աղյուսակ 19. Ունի աշխատանքային պայմանագիր, եթե վարձու աշխատում է		
	Քանակը	Տոկոսը
Այո	313	86.2
Ոչ	50	13.8
Ընդամենը	363	100.0

Աղյուսակ 20. Գործատուն վճարումներ է կատարում սոցիալական կենսաթոշակային հիմնադրամ, եթե վարձու աշխատող է		
	Քանակը	Տոկոսը
Այո	296	94.6
Ոչ	2	0.6
Զգիտեմ/չեմ կարող ասել	15	4.8
Ընդամենը	313	100.0

Աղյուսակ 21. Աշխատանքային պայմանագիր չունենալու պատճառները, եթե աշխատում է ուրիշի մոտ (դասակարգված նվազման կարգով)		
	Քանակը	Տոկոսը
Չարցվածի համար աշխատանքային պայմանագիր ունենալն անհրաժեշտ և կարևոր չէ	11	22.0
Չարցվածին երբեք չեն առաջարկել ստորագրել աշխատանքային պայմանագիր	8	16.0
Չարցվածը նոր աշխատող է և մոտ ապագայում կունենա աշխատանքային պայմանագիր	7	14.0
Գործատուն հրաժարվել է պայմանագիր ստորագրել՝ հարկերից խուսափելու համար	7	14.0
Չարցվածը պարզապես չգիտի պատճառը	6	12.0
Չարցվածը հրաժարվել է ստորագրել պայմանագիր, քանի որ դա կնվազեցնի աշխատավարձի զուտ զուևարը	2	4.0
Այլ	9	18.0
Ընդամենը	50	100.0

Աղյուսակ 21: Աղյուսակ 21-ի “այլ” պատասխանները	
Աշխատանքը կազմում է հարցվածի կրթական գործընթացի մասը (պրակտիկա հիվանդանոցում), հետևաբար, նա չի վճարվում և չունի աշխատանքային պայմանագիր:	2
Պետական սեկտորի աշխատող չէ, այդ պատճառով էլ չունի աշխատանքային պայմանագիր:	2
Ներկա աշխատանքը ժամանակավոր է, այդ պատճառով էլ աշխատանքային պայմանագրի կարիք չկա:	1
Հարցվածը չի հավատում այդ պայմանագրի կետերին:	1
Գործատուն ինձ աջակցել է և աշխատանքի ընդունել: Ես արդեն թոշակառու եմ և աշխատելու իրավունք չունեմ, հետևաբար, չեմ կարող ունենալ աշխատանքային պայմանագիր:	1
Ես անցյալում օդանավակայանի աշխատող եմ եղել, բայց ինձ հեռացրել են աշխատանքից: Ներկայումս աշխատում եմ, որպես մատուցողուհի, և չեմ ցանականում, որ այս աշխատանքը գրանցվի իմ աշխատանքային գրքույկում:	1
Տնօրինությունը փոխվել է, իսկ նոր տնօրենը ինձ դեռ չի գրանցել:	1

Աղյուսակ 22. Գրանցված է, որպես անհար ձեռներեց, եթե ինքնազբաղված է		
	Քանակը	Տոկոսը
Այո	22	10.9
Ոչ	180	89.1
Ընդամենը	202	100.0

Աղյուսակ 23. Եթե գործատու է, ունի աշխատանքային պայմանագրեր իր աշխատողների հետ		
	Քանակը	Տոկոսը
Այո	30	85.7
Ոչ	5	14.3
Ընդամենը	35	100.0

Ժողովրդագրական տվյալներ

Աղյուսակ 24. Հարցվածների տարիքը		
	Միջինը	Մեղիանը
	40.84	42.00
	Նվազագույնը	Առավելագույնը
	18	62

Աղյուսակ 25. Հարցվածների սեռը		
	Քանակը	Տոկոսը
Տղամարդ	350	34.9
Կին	654	65.1
Ընդամենը	1,004	100.0

Աղյուսակ 26. Հարցվածների ստացած ամենաբարձր կրթությունը			
	Քանակը	Տոկոսը	Գումարային տոկոսը
տարրական դպրոց (4 տարի)	3	0.3	0.3
թերի միջնակարգ դպրոց	2	0.2	0.5
8-ամյա միջնակարգ դպրոց	55	5.5	6.0
10-ամյա միջնակարգ դպրոց	293	29.2	35.2
քոլեջ, մասնագիտական դպրոց	365	36.4	71.5
համալսարան (4 կամ 5 տարի)	256	25.5	97.0
գիտական կոչում (մագիստրատուրա, ասպիրանտուրա և այլն)	30	3.0	100.0
Ընդամենը	1,004	100.0	